Ավշեն

Մակերես՝ 14.7կմ^2

Բնակչություն՝ 277

Գյուղ Արագածի տարածաշրջանում: Նախկինում ունեցել է Չոբանգերակմաս, Չոբանգյարմազ, Չոբանմազ անվանումները: Վերանավանվել է Ավշեն 1978 թ-ին: Գյուղի անվան հիմքում ընկած են՝Ավ եւ Շեն՝ արմատները, որը քրդերեն նշանակում է՝ջրառատ՝: Ընկած է Ապարան-Սպիտակ խճուղուց աջ: Գյուղը տեղադրված է Ծաղկունյաց լեռնաշղթայի հարավային լանջերին: Գտնվում է ծովի մակարդակից 2150 մ բարձրության վրա: Կլիման բարեխառն ցուրտ լեռնային է: Ձմեռները տեւական են, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Ամառները տաք են, համեմատաբար խոնավ: Հուլիսյան միջին ջերմաստիճանը տատանվում է 16-18-ի սահմաններում, հունվարյանը՝ -6,-8-ի սահմաններում: Մթնոլորտային տարեկան տեղումների քանակը 450-600 մմ: Բնական լանդշաֆտները սեւահողային տափաստաններ են:

1831 թ-ին ունեցել է 278, 1897 թ-ին՝466, 1939 թ-ին՝ 583, 1959 թ-ին՝ 350, 1979 թ-ին՝ 426 հայ բնակիչ, որոնց նախնիների մի մասը եկել է Կարսից եւ Արեւմտյան Հայաստանի զանազան շրջաններից:

Համայնքի բնակչությունը կազմում է 378 մարդ, որից 47% տղամարդիկ են, իսկ կանայք՝ 53%: Մինչաշխատունակ տարիքի բնակչությունը կազմում է 38%, աշխատունակ տարիքի ներկայացուցիչները՝ 49%, հետաշխատունակները՝ 13%: Գյուղն ունի 59 տնտեսություն:

Ունի կապի հանգույց, գրադարան եւ դպրոց:

Համայնքի հողահանդակների 17% սեփականաշնորհված, որոնք օգտագործվում են որպես վարելահողեր: Զբաղվում են դաշտավարությամբ, բանջարաբուծությամբ: Մշակում են հացահատիկային, կերային կուլտուրաներ: Զբաղվում են խոշոր եւ մանր եղջերավոր անասնաբուծությամբ: Մշակում են կաթ եւ կաթնամթերք:

Արդյունաբերությունը բացակայում է:

Համայնքի հիմնախնդիրների մեջ կարեւորվում է դպրոցի շենքի, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը: